



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ՀՈԳԵՅԱՆԳԱՍՏԵԱՆ ԵՒ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ԹՈՒՐԹԻՈՅ ԱՐԵՒԵԼԸԸ ՉՈՅ ԳԱՅԱԾ ԻՐԱՆԱՀԱՅԵՐՈՒ
ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, յառաջիկայ Կիրակի, 21 Սեպտեմբերին, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Տեր Ողորմեայի յատուկ արարողութիւն տեղի պիտի ունենայ ի յիշատակ Իրանահայ մեր գաղութի այն զաւակներուն, որոնք 9 Սեպտեմբերին զոհ գացին Թուրքիոյ արեւելեան շրջանին մէջ, Իրանի սահմանին մօտ տեղի ունեցած ծանօթ արկածին:

Նոյն առիթով, հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Հոգեհանգստեան աղօթքին կը մասնակցի Ազգ. Առաջնորդարանիս հովանին տակ գործող «Նոր Ջուղայի Բարեկամներ» յանձնախումբը:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ ներկայ ըլլայ այս արարողութեանց, աղօթք բարձրացնէ զոհերու հոգիներուն եւ վիրաւորներուն շուտափոյթ ապաքինման համար:

ԴԻՒԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

PRAYERS FOR THE VICTIMS OF THE TURKEY BUS CRASH

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Sunday, September 21st, special prayers will be offered for the victims of the bus crash which occurred in Eastern Turkey near the Iran border on September 9th.

On this solemn occasion, requiem service will also be offered for the souls of the victims at St. Mary's Church in Glendale in which members of the "Friends of New Julfa" Committee, which serves under the auspices of the Prelacy, will participate.